

ԱՍ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

«ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԻՆՉ-ԻՆՉ ԳՈՐԾՈՑ...»
ՊԻԵՍԻ ՄԱՍԻՆ

Ներսիսյան դպրոցի առաջին աշակերտների (Խաչ. Աբովյան, Ստ. Նազարյան, Պետրոս Մաղաթյան (Սեյեադ) և այլն) թվին է պատկանում նաև Գալուստ Շիրմազանյանը:

Նրա առաջին տպագիր ստեղծագործությունը՝ մի գրաբար բանաստեղծություն է՝ լույս տեսած «Նրախաչբիք Ներսիսեան դպրոցի» ժողովածուի մեջ. սակայն նրա գրական առաջին ծավալուն գործը եղել է մի վեպ, գրված 1826 թվին՝ Պողոս Ղարապաղցի վարդապետի առաջարկով, որի հիման վրա, հեղինակը 1860 թվին գրել է իր «Ասրի Բէկ և Գիքի» պիեսը: Պիեսից երևում է, որ այդ վեպը հիմք է ունեցել 1820 թվին Հին Նախիջևանում տեղի ունեցած մի դեպք: Դեպքի հերոսները պարսկական բռնությունից դժգոհ տպատամբներ են, որոնք անհուն հավատով կապված են սուսական օգնության փրկարար ուժի հետ: Այդ վեպն անտիպ է մնացել, և ձեռագիրն էլ առայժմ կորած է:

«Ասրի Բէկ և Գիքի» պիեսից բացի տրպագրված են նաև Շիրմազանյանի մի շարք ուրիշ և բազմաթիվ ստեղծագործությունները: Հիշենք այդպիսիներից՝ «Իմ նշանածն Արազն ա» պիեսը՝ Թավրիզի հարսանիքի նկարագրությունը, նրա հիշատակարանից հանված «Ճանապարհորդություն Հայաստանումը», «Անեկդոտներ, զվարճալի գրույցներ... առակներ» երգիծական նյութերի ժողովածուն, «Նյութեր ազգային պատմության համար» աշխատությունը և այլն:

Նա ունեցել է նաև բազմաթիվ այլ աշ-

խատություններ, որոնք համարվում են կորած: Ափսոսանքի արժանի են հատկապես Ա. Ս. Գրիբոյեդովի մասին նրա հավաքած հարուստ տեղեկությունները, որոնց մի չնչին մասը նա գետեղել է «Նյութեր ազգային պատմության համար» աշխատության մեջ:

Գալուստ Շիրմազանյանի անտիպ ստեղծագործություններից փշրանքներ էլ կան, որ հասել են մեզ. այդպիսիներից են նրա երկու գրաբար երգերը՝ նվիրված զինուն և սերախությունը:

Երևում է, որ նա սեր է ունեցել նաև դեպի հնագույն մատենագրությունը. նրա անձնական գրադարանում գտնվելիս են եղել 200-ից ավելի ընտիր գրչագրեր:¹ Կարևոր աշխատանք է կատարել Գալուստ Շիրմազանյանը նաև բանահավաքության ասպարիզում. գրա վկան է Հայկական ՍՍՌ Մատենագարանի № 6588 ձեռագիրը, ուր պահպանվում են հայանի ու անհայտ հեղինակների 53 երգ և բանաստեղծություն: Դրանցից շատերը խոշոր նշանակություն ունեն մեր գրականության համար: Հիշենք «Ողբ դստերն մեծի Իշխանի» գրամատիկական պոեմը, Ալամզարյանին վերագրված «Ասիւծ և էշ» առակը, Ստեփաննոս քահանայի «Ափսոս քեզ Հայոց խղճուկ ժողովուրդ» տողով սկսվող գողաբիկ բանաստեղծությունը, Ազրար Աղամի,

¹ Մատենագարանի արխիվի բաժնում պահպանվում է նրա ունեցած ձեռագրերի, գրքերի և հնագույն թանգարանային իրերի ցուցակը (տես Կաթողիկոսական Դիվան, Թղթապանակ 228, Վավերագիր 17):

Շամշի Մելքոյի, Թուրինջի, Գյուրջի Նա-
վի, Միսկին Բուրջու, Հար. Ալամդարյանի,
և այլոց սակեղծագործութիւնները:

Գ. Շիրմազանյանն առանձնահատուկ
սեր է ունեցել զեպի թատերական արվես-
տը. այդ են ապացուցում ոչ միայն նրա
մեզ հասած մի քանի պիեսները, այլ և այն
հանգամանքը, որ նա իր սեփական տան
ընդարձակ դահլիճը, սրը զրականութեան
մեջ հայանի է Շիրմազանյանների գար-
պաս կոչումով, երկար ժամանակ արամա-
զրել է ինչպես հայ, նույնպես և վրաց նոր
սակեղծից թատրոններին:



Հայ զրականութեան պատմութեան մեջ
հաճախ է հիշվում Գ. Շիրմազանյանի զը-
րած մի կամեղիան՝ որպես անհետ կորած
մի սակեղծագործութիւն:

Վերջերս մեզ հաջողից Մատենադարա-
նի Զեռագրատանը հայտնաբերել այդ պիեսի
2 ձեռագիրը: Ան այդ ձեռագրերի ամփոփ
նկարագիրը.

№. 3045. — Թերթաքանակ 70, նյութ-
թղթ՝ թուղթ, գիր՝ նոսր, մեծութիւն 21,5×
17,5, կազմ՝ ստվարաթուղթ (ծաղկաթերթի-
կով պատած, մեջքը և անկյունները՝ կա-
նաչ կաշի). վիճակը՝ լավ, զրիչ՝ Մկրտիչ
վարժապետ Եկենյան, զրչութեան վայրը՝
հովանարար Թիֆլիս, զրչութեան ժամա-
նակը՝ 1852 թ. սեպտեմբեր:

№. 8810. — Թերթաքանակ 186, նյութ
թուղթ, գիր՝ ուշ շրջանի շղագիր, մեծու-
թիւն՝ 11,5×17,5, կազմ՝ ստվարաթուղթ
(ծաղկաթերթիկով պատած, մեջքը և ան-
կյունները՝ կանաչ կաշի), զրչութեան պա-
րագանները անհայտ (1855-ին արդեն զրան-
վելիս է եղել Ավետիք Էնֆիաճյանի գրա-
դարանում):

№. 8810 ձեռագիրը գուրկ է ոչ միայն
զրչի և զրչութեան մասին լինելիք տեղե-
կութիւններից, այլև չունի ոչ խորագիր
և ոչ էլ հեղինակի անվան հիշատա-
կում: № 3045 ձեռագիրն, ընդհակա-
ռակն՝ ունի խորագիր, զրչութեան մասին
ավյալներ, սակայն հեղինակի անունն այն-
տեղ թաքցված է իրար հասող զալարուն

զծիկների տակ և զժվար է նկատում:
Իսկ զրանից վերև գրված է. «Շարագրեալ
յաղագիրէ յումեմնէ ի Տիֆլիս. 1841»: Ընդ-
օրինակոյր չնայած զրել է իր անունը, սա-
կայն զրել է շատ մանր տառերով:

Ինչո՞վ բացատրել այս հանգամանքը:

Այ. Երիցյանը «...Կովկասի Հայք...»-ում,
այդ պիեսի մասին խոսելիս, ասում է, որ
այդ պիեսի ձեռագրերն այն ժամանակ
զազանի էին տարածվում, իսկ ստիկա-
նութիւնը փնտսում էր նրա անհայտ հե-
ղինակին: Այստեղից պարզ երևում է, թե
ինչու № 8810 ձեռագիրը պիտի գուրկ լի-
ներ և խորագրից, և այլ ավյալներից: Դա
միաժամանակ ցույց է տալիս, որ այդ ձե-
ռագիրն ընդօրինակված էր այն ժամանակ,
երբ դեռ կային թե չ. Կարբեցին, որ մե-
ռով 1842 թվին և թե Կարապետ Եպիսկո-
պոսը, որը հեռացվեց պաշտանից 1845 թվին.
հատկապես վերջինս, որովհետև պիեսը ամե-
նից շատ զրա դեմ էր ուղղված, և զա էր,
որ դիմել էր ստիկանութեանը՝ պիեսի հե-
ղինակին գտնելու և պատժելու:

№ 3045 ձեռագիրը ունի խորագիր և
ընդօրինակված է 1852 թվին, երբ արդեն
Ն. Աշտարակեցին էր կաթողիկոս: Եվ ար-
տագրող Մկ. Եկենյանն էլ, թեկուզ զծիկների
տակ, բայց և այնպես հիշատակել է հեղի-
նակի անունը, երբ այլևս չկային Կարապե-
տի և Կարբեցու սարսափները:

Այս բոլորը հիմք է տալիս կարծելու, որ
№ 8810 ձեռագիրն ընդօրինակված է
1842—1843 թվերին: Եվ զրանից 12—13
տարի հետո էր միայն, որ ժամանակի գոր-
ծիչներից մեկը հնարավորութիւն ունեցաւ
այդ ձեռագրի վրա զրելու. «№ 71. ի ձե-
ռագիր ի մատենից զրադարանի Աւետիքայ
Մկրտչեան Էնֆիաճեանց ի 1855 ամի
Տիֆլիս»:

№ 3045 ձեռագրի սկզբի թերթերի լու-
սանցներում կան մատիտով արված մի
շարք նշումներ: Նշումների հեղինակն ան-
հայտ է, սակայն հենց այդ նշումներից
երևում է, որ նա եղել է Կարապետ Եպիս-
կոպոսի մտերիմը, ծանոթ է եղել նրա ինչ-
պես Թիֆլիսյան և Ախալցխայան առաջնոր-
դութեան մանրամասնութիւններին, նույն-
պես և Արզրումյան:

Այդ նշումները, կարելի է ասել, առաջին դրավոր քննադատական նշումներն են Գ. Շիրմազանյանի պիեռի մասին: Ափսոս, որ միտումնավոր են և շոշափում են փաստական մանրուքներ:

* * *

Ընդունված է ասել, որ այդ պիեսը զբրված է 1836 թվին: Դա սխալ է՝ որովհետև.

1. № 3045 ձևագրի վրա պարզորեն դրված է, որ այն հորինվել է 1841 թվին:

2. Պիեսում կա մի նամակ (Սեփոյի կնոջ), որի տարեթիվն է ՌՄՁԹ. (1289 + 551 = 1840): Այդպիսի նամակ 1836 թվին պիես գրողը չէր կարող ոչ ներկայացնել և ոչ հորինել:

3. Գործող անձերից մեկը Կարապետ կախկոպոսին ասում է. «Դու ջեր չուրս տարի էլ չկա, վուր նրանցը (Թիֆլիսի հարուստներին) ճանչնում իս»: Կ. կախկոպոսը Թիֆլիս է գնացել 1837-ի սկզբներին, ավելացնելով դրան «չուրս տարի էլ չկայ», այսինքն 3 տարի և 8—10 ամիս, կստանանք մտավորապես 1840 թվի աշունը: Այսպիսի դեպք 1836 թվին ներկայացվել չէր կարող:

4. Պիեսի վերջում խոսվում է Հովհ. Կարբեցու մահվան մասին. իսկ նա մեռել է 1842 թվին...

Այսպիսով՝ հերքվում է պիեսը 1836 թվին վերագրող կարծիքը և պիեսի հորինման համար մնում է 2 ավյալ՝ 1841-ը և 1842-ը: Կարծում ենք, որ այն հորինված է հենց 1841—1842 թվերի ընթացքում: Դրանից ուշ չէր կարող լինել, որովհետև այդ մասին ավյալներ չկան, բացի դրանից 1843 թվին արդեն ներսես Աշտարակեցին էր նշանակված կաթողիկոս և այլևս Կարապետ կախկոպոսը հնարավորութուն չէր ունենա դիմելու աստիկանությանը:

Այս պիեսի մասին առաջին անգամ խոսող Մարկոս Աղաբեկյանն ասել է. «Այդ եղելությունք տեղի են ունենում 1836 թվերում»: (Այստեղ նույնիսկ խոսք չկա պիեսի հորինման մասին): Դրանից առաջ էլ նա հայտարարել է. «Կարելի է, որ թրվականի և անունների մասին շփոթվիմ...»: Սակայն հաջորդ խոսողներն, այլ ավյալներ

չունենալով, մի կողմ են դրել Աղաբեկյանի խոսքերի ստուգելիությունը և 1836 թվը ներկայացրել են որպես ճշգրիտ տարեթիվ:

Պիեսն ամփոփում է Կարապետ կախկոպոսի Թիֆլիսյան առաջնորդության պատմությունը (1836—1842):

Բոլոր գործող անձինք էլ իրական դեմքեր են, փաստերը նույնպես առնված են իրականից: Կառչած մնալով փաստերի և իրականության մանրամասն դրսևորումից, Շիրմազանյանը չի կարողացել բեմ հանել նաև շատ-շատերին, որոնց այնքան ցանկացել է: Ուստի և նրանց մասին խոսել է կամ դրույցի կամ փաստաթղթերի միջոցով. և երբեմն այդ «հեռակա գործող» անձինք ավելի շատ են երևում, քան իսկական գործողները (օրինակ՝ Սիմ. Բզնունի, Հովհ. Կարբեցի, Գևորգ վարդապետ և այլն): Այս «հեռակայող»-ներից հեղինակը համարել է միայն Սիմ. Բզնունուն և Սեփոյի կնոջը, իսկ մյուսներին՝ հատկապես Հովհ. Կարբեցուն շատ ուժեղ ծաղրի է ենթարկել:

* * *

Գալուստ Շիրմազանյանի այս կոմեդիան ամբողջապես ուղղված է ժամանակի ձրիակներների և խավարամոլների բանակի դեմ: Հեղինակը խիզախորեն խարազանում է Հովհ. Կարբեցուն՝ ամենաանողոք փաստերի ու վկայությունների միջոցով: Առավել ևս ծաղրի ենթարկում Թիֆլիսի առաջնորդ Կարապետ կախկոպոսին, որը ցրեց Արմավիրի «Նախաշավիղ»-ի տղազրվող մամուլները: Վարպետներն ցույց է տալիս այդ շահամոլի և փառամոլի ամբողջ էությունը: Ծաղրում և պախարակում է էջմիածնի սինոդականներին, ինչպես նաև տասնյակ ուրիշ նշանավոր ու աննշան հողատերականների:

Հողատերականներից բացի հեղինակն ըսկսում է մերկացնել պետական պաշտոնյաներին, պրոսկուրոր Թովմա Ղորգանյանին, ատենադպիր Քարաաշավին և այլն: Թեպետ զգույշ, բայց թունավոր սլաքներ է ուղղում նա ցարիզմի Կովկասյան ներկայացուցիչներ Բարոն Ռոզենի և այլոց դեմ՝ որպես

կաշառակերներին և արգարությունը ոտնահարողներին: Բ. Ռոզենի անունը հաճախ է հիշատակված 2-րդ գործողության մեջ, ուր ասված է «Եւ մինչդէս սպասէաք արգարքննութեան, յայանեցին մեզ թէ պարտիք յաքսոր գնալք. ահա Ռոզենի արգարադատությունը¹:

Խարազանված և ծաղրված են նաև հայ հարուստներն ու իշխանները:

Գ. Շիրմազանյանի պիեսը առաջին գեղարվեստական ստեղծագործություններից մեկն է մեր նոր գրականության մեջ, որ խիզախորեն և բացահայտ կերպով դանակոծում ու ծաղրում է ժողովրդի թշնամիներին, բեմ հանելով նրանց՝ իրենց իսկական անուններով և մականուններով:

Պիեսում օգտագործված են Ս. Բզնունու մի քանի փաստաթղթերը: Հեղինակը ջերմորեն համակրում է Բզնունուն, ուստի և՛ նրա խոսքերը բերում է իր նպատակին ծառայեցնելու՝ որպես իր սեփական մտքերի դրսևորում: Բզնունին և իր կողմնակիցները գրել են ցարին իրենց աքսորվելու մասին. «Թէ ինչ էր պատճառն՝ չյայանեցին մեզ, միայն կամեմ ասել, թէ մեք չքավոր և նա հարուստ, գիտէ սուրբ կայսրութիւնն Ձեր, որ հարուստի խօսքն ընդունելի է, քան չքավորինն»:

Այս սոցիալական մտմենտը նկատվում է նաև հոգևորական հաշիվներում. Կարապետ եպիսկոպոսն ասում է. «Տգևտ, անմիտ, լիբբ, վատաբարուց տեր քահանա ըլլա՛ վնաս չունի, բայց ատանկ աղքատ ըլլա նե՛ մենք չենք ուզեր. և չըլլա՛ ան ավելի լավ է»:

Նույն Կարապետ եպիսկոպոսը պատասխանելով դերձակների շուտաբաշուն՝ ասում է. «... ի հարկե, դանազանություն մը պետք է ըլլա ազնվականի և դերձակի մը ինչպես կենդանության, նույնպես մահվանից յետը, յան»:

Դերձակների համաքարապետը՝ Շիրմազանյանի միակ համակրած գործող անձնավորությունը, պատասխանում է.

¹ Բ. Ռոզենի կաշառակերության մասին խոսում է նաև պիեսի սկզբի մասում Կ. եպիսկոպոսին առաջնորդ նշանակելու համար նրան, Տայինովի ձեռքով հասցրված գումարի կապակցությամբ:

«... Ես, 40—50 տարի ավելի կուլի, վուրքու էն մենձ-մենձ մարդկանց կու ճանաչեմ: Դիփունի հիդ կոճի էլ իմ խաղացի... Ասինք հիմի նրանք մէ-մէ շլապկա ին ծածկի ու մէ-մէ շինել ին գցի վրեններուն ու փքվում են, խաչը գիտենա, չէ թե Հայու ազգին, քու էն հոգևոր տերին էլ մե կոպեկի լավություն նընգած տեղն հարկավոր չեն գա...»

Ինչպես գիտենք, պիեսի հորինման տարիներին դաժան պայքար էր գնում գրարարի դեմ: Այդ տարիներին էր, որ Արովյանը համառորեն լծվել էր աշխարհաբարի կիրառմանը: Եվ ահա նրա հնչեցրած Քանաքեռի բարբառի կողքին հնչում էին նաև Թիֆլիսահայոց, ախալցխացիների բարբառները, և ժամանակի գրական (ոչ գրարար) լեզուն՝ միաժամանակ նաև Շիրմազանյանի կոմեդիայից:

Թիֆլիսահայոց բարբառը եթե չափածոյով մտել էր գրականության մեջ՝ Սայաթ—Նովայի, Շամշի Մելքոյի և այլոց կողմից, ապա արձակով դեռ չէր մտել: Այս կոմեդիայով էր, որ այն մուտք գործեց արձակի և գրամատուրգիայի բնագավառը:

Բարբառներից բացի, այստեղ ուշադրով է նաև ժամանակի գրական լեզվի ներկայությունը, որով խոսում են Նրեմիա Արծրունին և Նփրեմ վարդապետը:

Ասում են, որ այդ կոմեդիան մի երկու անգամ բեմադրվել է Շիրմազանյանների հայանի Դարպասում, և եթե ընդհատվել է նրա ներկայացումը, գրա առաջին պատճառը պիտի փնտռել ոստիկանության և կառավարության հարուցած արգելքի մեջ, ապա և՛ պիեսի գրամատիկական թերությունների մեջ:

Գ. Շիրմազանյանի կոմեդիայի պարունակած փաստերը հարուստ են: Դրանց հիման վրա մենք որոշ լրացուցիչ տեղեկություններ ենք ստանում այնտեղ նշված բազմաթիվ անձնավորությունների վերաբերյալ: Տեղեկանում ենք նրանցից շատշատերի փոխհարաբերությունների մասին: Հիշատակենք, որ պիեսում, գործող անձերից բացի, մատնանշված են նաև 85—90 այլ իրական դեմքեր:

Թե որքան են ճիշտ այդ պիեսում հիշ-

ված փաստերն և փաստաթղթերը, մասամբ մենք կարողացանք սառուզել: Պիեսում, ինչպես ասացինք, տեղ են դառել Ս. Բզնունու երեք փաստաթղթերի պատճենները: Մենք այդ փաստաթղթերից երկուսի տառացիորեն համընկնող տարբերակները գտանք Սիմ. Բզնունու ձեռագիր վարքագրության մեջ, որը պահպանվում է Մատենադարանում: Ինչ վերաբերում է երկրորդ փաստաթղթին՝ դրա օրինակը չգտանք, սակայն դրա բովանդակությունը ցրիվ է տրված նույն ինքնակենսագրության մեջ: Նորակացում ենք, որ Ս. Բզնունին ունեցել է և առանձին պատրաստած մի փաստաթուղթ, որի մի օրինակն առայժմ հայտնի է դառնում Գ. Շիրմազանյանի պիեսից: Ինքը Շիրմազանյանն էլ պիեսի տողատակային մի ծանոթագրության մեջ մատնացույց է անում համապատասխան վավերագրեր: Վարդան Օձնեցու անտիպ պատմությունից տեղեկանում ենք, որ նա՝ իր պատմությունը գրելիս, մեծապես օգտվել է Մանվել Ալթունյան Կյումուշխանեցու մի ձեռագիր աշխատությունից՝ «Կշիռ գրութեանց» խորագրով: Այդ աշխատությունը պատկանել է Ն. Աշտարակեցուն, վերջինս դա թողել է Շիրմազանյանների մոտ աքսոր՝ մեկնելուց առաջ: Օձնեցին՝ այդ ձեռագրից օգտվելիս նշել է, որ այն գտնվում է Ազա Գալուստ Շիրմազանյանի տանը: Այս բոլորը հիմք են տալիս համոզվելու, որ մյուս փաստաթղթերն էլ իսկականից են ընդօրինակված: Բացառություն կարող է կազմել միմիայն Սեփոյի կնոջ նամակը, որը հավանաբար ստեղծագործված է:

Որքան էլ անողոք ու խիզախ է Գ. Շիրմազանյանն իր դարի մոռյալ ուժերի դեմ, բայց և այնպես նրա կոմեդիան չունի իր մեջ այն ժամանակ բորբոքված ազգային ազատագրության, լուսավորության, ուսուցողական հետ բարեկամական կապերն ամբողջապես և նման այլ վսեմ գաղափարները: Այդ գաղափարներով է տրոփում նույն տարիներին գրված «Վերք»-ի յուրաքանչյուր տողը, որի ամեն մի նախադասությունից երևում է հեղինակի քաղաքական-գաղափարական դավանանքը: Նույնը չի կարելի ասել «Նկարագրութիւնք...»-ի

մասին: Եվ դա իր պատճառներն ունի. Գ. Շիրմազանյանը փարված էր իր ժամանակակի աշխարհին, որ կոչվում էր ներսիսյան, և Շիրմազանյանը գործում էր, կարծես, ավելի շատ սրպես այդ խմբակի և ոչ թե հասարակության ու հայ ժողորդի առաջավոր ներկայացուցիչը: Հետագայում նա դարձավ Թիֆլիսի քաղաքագլուխ և որոշ ժամանակից հետո արժանացավ իր երբեմնի սիրելի համքարների դաժան սպանալիքին ու հաղիվ փրկվեց նրանց պատժիչ խոտվությունից:

Գեոևս վերջնականապես պարզված չի Գ. Շիրմազանյանի գաղափարական ու հասարակական գործունեության բնույթը, բայց պարզ է միանգամայն, որ տվյալ գործի մեջ նա, 1841—1842 թվերին հանդես է գալիս սպողիցիոն արամազրություններով և դիմակաղերձ է անում եկեղեցու ղեկավարներին, կաշառակերությունը, շահամուլությունն ու անբարոյական բարքերը և քննադատաբար վեր է հանում իր ժամանակի մի շարք հասարակական հարաբերությունները:

Չնայած իր պրիմիտիվ կոռուցվածքին, դրամատիկական թերություններին, պամֆլետային բնույթին, Շիրմազանյանի գործը հանդիսանում է 19-դ դարի սկզբի հայկական նոր ստեղծվող դրամատուրգիայի առաջին նմուշներից մեկը և անկասկած արժանի է մեր դրականության պատմության ուշադրությանը:



Տեքստը կազմելիս հիմք ընդունեցինք № 8810 ձեռագիրն (Ա.) իր մի շարք առավելությունների պատճառով (վերջից ավելի ընդարձակ է, բաց թողումներ քիչ ունի և հավանաբար ավելի հին է): Այդ օրինակի համեմատությամբ № 3045 (Բ) օրինակի ունեցած տարբերությունները ցույց տվինք էջերի տողատակը: Այս հիմնական սկզբունքից երբեմն, ստիպված, շեղվեցինք՝ Ա օրինակի կսպիտ սխալներն ու բաց թողումները լրացնելով Բ օրինակի հիման վրա՝ Ա-ի մասին նշելով տողատակում:

Խուսափելով տեքստը ծանրաբեռնելուց, առատորեն և նույնությամբ կրկնվող սխալներն մասին նշումներ չկատարեցինք տեքստի մեջ. այսպես օրինակ.

ա) «Է» և «Ե», «Օ» և «Ո», «Յ» և «Հ», «Ի» և «Վ» տառերի սխալ գործածումներն ուղղելիս:

բ) Անունների սխալ գրելաձևերն ուղղելիս:

գ) Բ. Թ. Խնիցիալները՝ Բ. Բ.-ով ուղղելիս, որ կնշանակի Բարոն Թողեն և այլն:

Կատարել ենք նաև սակավաթիվ, բայց անհրաժեշտ, միջամտություններ.

ա. Պատվով գրված աստված («Աձ») բառը լրիվ գրելիս, երբ այն գտնվում էր թիֆլիսահայ բարբառով խոսող անձնավորություն մոտ, գրել ենք աստուձ ձևով, չնայած՝ պատվազիրը նույնն էր («Աձ»):

բ. Ելնելով այդ նույն բարբառի պահանջից, երբ Ե օրինակը հիմք է տվել, փոխել ենք որոշ ձևեր, և Ա օրինակի մասին ցույց տվել առդատակում, («այսպես օրինակ շոր»-ը՝ «վուր»-ով, «եմ»-ը՝ «իմ»-ով, «եկեղեցին»՝ «էգեղեցի»-ով և այլն):

գ. Անհրաժեշտ տեղերում գործ ենք ածել չակերաներ, որոնց գործածությունն իսպառ բացակայում է Ա-ում և մտամբ կա Ե-ում:

դ. Փակագծերը պատկանում են Ե օրինակին: Ա օրինակում փակագծիկի բառերն ընդգծված են:

ե. Գործող անձանց ցանկը կազմել ենք ԱԵ ձևազրկում գտնվող համապատասխան ցանկերի հիման վրա, մտցնելով այնտեղ նաև մոտացված անունները (նշենք, որ այդ ցանկում ցույց տված «Հարուքուն Աղա Մուրաֆյան»-ը որպես գործող անձն, հանդես չի գալիս, նրա մասին միայն հիշատակում կա՝ սկզբի մասում):

Իսկ հիմնականում հիմքային օրինակը թողել ենք անփոփոխ:

Ելնելով ընդունված օրենքից, տեքստի ուղղագրությունը փոխել ենք նորով, բացի գրաբար շարադրված մասերից (խորագիր, նամակներ, դիմումներ, առանձին պարբերություններ, հեղինակային միջամտություններ և այլն):

Տեքստին կցել ենք ծանոթագրություններ, հատուկ անունների ցանկ և բառարան: